45. ՉԱՐՉԻՆ

Կէլնի, չէլնե մեյ խատ չարչի: Էսա չարչուն մեյ խատ էշ կէլնի: Էսա չարչին ի, զըմեն օր չամիչ կպառնա ուր իշուն, կտանի գյեղրանք կծախի կուզյա:

Մեկ օր էսա չարչին գյընտ չամիչ կպառնա ուր իշուն, կէրթա գյեղ: Ճանբախ իսոր մեյ խատ մարթըմ ռաստ կուզյա, կասի. - Ախպե՛ր, ախպե՛ր, զիկ մեկ ճանգյ չամիչ տուր ուտեմ, քյե մեյ խատ խորոտ խաբար մ'ասեմ, որ քյո չամչիկ տրհա անուշ ի:

Չարչին ի, մեյ խատ զինքյ ուր տյուշմիշ կէլնի, կասի. «Ջայընամ, մեկ ճանգյ չամիչ տամ էսա մարթուն, խենքյ ի՞նչ խաբար ի, կասի, որ քյանձ իմ չամիչ անուշ ի»: Ծեռ կզարկի պեռան մեչեն մեկ ճանգյ չամիչ կխանի, կուտա էսա մարթուն:

Մարթն ի, չամիչ կառնի կասի. - Քյո սոտի սրո մի պանա քյո կընգյան:

Չարչին ի, կասի. - Էտա՞ էր քյո խաբար, որ քյանձ իմ չամիչ տրհա անուշ էր:

Մարթն ի, կասի. - Խա:

Չարչին ի, մեյ խատ ուր գյընտ իրար կուտա, կթողնի կէրթա: Քիչըմ կառուճանա թե չէ; էտա մարթ գյընա կբոռա, կասի. - Չարչի, չարչի, մեկ ճանգյ էլ չամիչ տուր ուտեմ, քյե մեյ խատ էլ խաբար ասեմ, որ քյո չամչիկ տրհա անուշ ի:

Չարչին ի, զինքյ ուր կասի. «Էսա շունշանորդին չամչի խամն առեց, էլ իմ յախեն պաց չի թողնե»:

Կթողնի քյիչմ կառաճանա, զինքյ ուր կփոշմընի, կասի. «Վալա, ես պիտի մեկ ճանգյ էլ չամիչ տամ էսա մարթուն, խենքյ ինչ պիտի ասի»: Կտառնա ետ, կխանի մեկ ճանգյ էլ չամիչ կուտա էսա մարթուն:

Մարթն ի, որ էտա մեկ ճանգյ չամիչն էլ կառնի, կասի. «Որ տեղըմ կէրթաս, քյե-քյե մ'էրթա վիրին գյընտ նստի, որ քյե չի կածրաստուցեն, կածր նստի՝ որ քյե զոռով պանկրատուցեն»:

Չարչին ի, կասի. «Վա՜յ, ես քյո խեր տա՛մ շուն ուտի, ես էլ ասեցի՝ վո՞վ կիտի, ի՞նչ պիտի ասի»: Ուր էշ կքըշի, կառաճանա, զինք ուր կասի. «Էսա թող զիկ խրատ էլնի, որ մեկել ըռըսկընա մարթերայ խաբրին ականջ չկախեմ»:

Չարչին ի, որ կառաճանա, էսա մարթ իտիվանց կըռռա, կասի. - Չա՛րչի, չարչի, մեյ ճանգյ էլ զիկ չամիչ տուր ուտեմ, քյե մեկ խատ էլ խաբարըմ ասեմ, կթողնիմ կէրթամ, էլ քյեզնից չամիչ չեմ ուզի:

Չարչին ի, որ էսա խաբար կլըսի, շատ կպարկանա, կասի. - Քյո կոտն ուտի քյո խաբար, վո՞վ կիտի, գյընա ի՞նչ ախմախ-ախմախ տյուս պիտի տաս:

Մարթն ի, կասի. - Չարչի, չարչի, տու քյո աստված կսիրես, իմ խաթըր մի կոտրե, զիկ մեկ ճանգյ էլ չամիչ տուր ուտեմ, քյե մեյ խատ էլ խաբա՛ր ասեմ, թող ասըրծու իրեքյ թըմըմի, ես կթողնիմ կէրթամ, տու զարա՛ր չես անե:

Չարչին ի, կասի. - Վա՛յ ես քյո խերն անիծիմ, փարա տուր, բալա առ որ կասին, գյեռ էսա ի: Չամիչ տվեցի կերավ, պերան քաղցրացավ, ընգյա ծեռ բալա՛:

Համան պարկոտ-պարկոտ ծեռ կզարկի, պեռան մեչեն մեկ ճանգյ չամիչ կխանի, կուտա էսա մարթուն, կասի. - Ա՛ռ, ջահնամ էլի, քյո խաբա՛ր զիկ լազըմ չի, աման չէլնի մեկել էրեստ կոկես, չամիչ ուզես, վալա, էլ չեմ տա:

Մարթն ի, էտա մեկ ճանգյ չամիչն էլ կառնի, կասի. - Չարչի՛ ախպեր, որ կարիք տեղըմ կէրթաս, տան տիրոչ պանին մի խառնըվե:

Մարթն ի, որ էսա խաբա՛ր կասի, կթողնի կէրթա:

Չարչին ի, կասի. «Ես կիտի, որ գյընա ախմախ-ախմախ տյուս պիտի տեր»:

Մարթն ի, խոր իտիվանց կըռռա կասի. - Չարչի ախպե՜ր, չարչի ախպե՜ր, որ կուգյաս քյաղաքյ կխառդուցես, կասես՝ Գյազպար ախպոր տուն ո՞րն ի, քյե շանց կուտան, կուգյաս մեր տուն, կէլնես կոնախ:

Չարչին ի, կասի. - Վալա, ես կիտեմ, իմ տված իրեք ճանգյ չամիչ պիտի հեչընա չէրթա:

Չարչին ի, ուր էշ կքըշի, կէրթա գյեղ, չամչըներ զըմեն կծախի, կուտա եղով, պրթով, ժաժկով, կպառնա ուր իշուն, ուրախ-ուրախ կուգյա տուն: Ճանբախ կնեղանա, իշու պեռ կառնի տակ, կասի. «Հա՛յվան շատ նեղացավ, քիչմ թող արածա»: Ինքյն էլ կէրթա մեչ խիրկիմ կասի՝ քիչմ ճյուր թափեմ: Կտիսնա որ ի՞նչ. գյեռ քյանիմ ծըմըրկի կոլ կա էտա խիրկի մեչ. ըսկուն պեկա-պեկ ծըմրյուկ ի պռնե, որ զըմեն ծըմրյուկ կուգյա մեկ կիտր: Չարչին ի, կասի. «Վալա, էսօր իմ ճան ճուկ ի, համ առտուրս աղեկ կընայ, համ էսա ծըմըրկըներ զիկ ռաստ էկան: Կա չըկա, խերու ճամխորթներ ըստեղ ծըմրյուկ են կիրե, սերմեր թափե, էսա ծըմըրկըներ պյուսե. թե վէ՝ ո՞ր ախմախ մարթ կուգյեր էսա զատ փաշտի մեչ բոստան կտընգյեր: Հայդե, ասենք մեչ աշխըրին ախմախ

մարթեր շատ կան, ամեն իրեքյ կոլ ծըմըրկով խո բոստան չէլնի՞: Չէ, ես իմ խոգյին, աստըծու սիրտ վեր զիկ քաղցրացեր ի, իսոր կասեն կըսմաթ, փառք քյեզ աստված, տու խեղճ չարչուն զըմեն գյախ ըսըսկընա լոփի ռաստ պիրես»:

Չարչին ի, ուրախ-ուրախ համան կէլնի էշ կպառնա, կուտա ուր սոճն, մեկ նաֆաս չուր տուն կքըշի: Խեստ որ կըխասնի տուն, կասի. - Կընի՛կ, շոտ էլի վազի ըռեսի տուն, ասա թող ջուխտըմ ջըվալ տան, սև տաշտի մեչ ծըմրյուկ իմ կընտե, էրթամ պիրեմ:

Կընիկն ի, կէլնի կվազի ըռեսի տուն, կասի. - Սեզ ջուխտ մե ջըվալ տվեք, լաւզըմ ի:

Ըռեսն ի, կասի. - Ախչի, մեկ ջուխտ ջըվալ ի՞նչ կանեք:

Կընիկն ի, կասի. - Իմ մարթ մեչ սե տաշտին ծըմրյուկ ի տեսի, պիտի էրթա պիրի:

Ըռեսն ի, որ էսա պան կլսի, ծեռայ տըկով ուր խոտաղ կօրոխկի, կասի. - Կընա՛ սև տաշտ, էն ծըմըրկըներ բիթուն ուրենց կոլերով, թաֆերով ժողվի, լիս ջըվալ, պե, ըսկուն սերսըփես էտա տարբար, որ ըսկի բալյու չանի թե էտա տեղ ծըմրյուկ էլեր ի:

Ուր խոտաղ ճամխելուց սորա չարչու կընգյան կասի. - Ախչի՛, տյու կընա, ես ջըվըլներ կառնեմ, կուգյամ:

Ըռեսն ի, խեստ որ տիսավ չարչու կընիկ զատացավ, էլավ ընգյավ մեչ գյեղին, ինչ կանդար ուր աղա, իշխան, տատական կին, ժողվեց առեց կընաց չարչու տրոան վերեն, չարչուն կանչեց տյուս, ասաց. - Իշխաններ, աղաներ, տատակայրտեր, ականջ արեքյ ծե խաբարմ ասեմ: Էսօր մեր չարչին ուր կընիկ օրոխկիր էր մեր տուն, զզնիս ջուխտըմ ջըվալ կուզեր, ես էլ մեյ խատ տյուշմիշ էլա, ասաիցի. «Մեր չարչուն ես որ կիտեմ ջուխտմ ջըվալ կա, էլ ընչի՞ պիտի օրոխկեր մեր տնիս ջըվալ ուզեր»: Կընգյան խառնցուցի ասի՛. «Ախչի՛, խեր էլնի, ջըվալն ի՞նչ կանեք», կընիկն ասաց որ. «Սեր մարթ կասի՝ սև տաշտի մեչ ծըմրյուկ եմ տեսե, էրթամ պիրեմ»: Մընկա խորոտ ականջ արեքյ, տիսեքյ ինչ կասեմ. ես որ կիտեմ, տուքյ էլ կիտեքյ, աստվածն էլ կիտե, որ մեչ սև տաշտին չուր էսօր բոստան տըրող չէլեր ի, բաշկա մարթ էլ ծըմրյուկ չի պիրե լըցե էնտեղ թողնի էրթա: Ապա էտա ծըմըրկըներ ո՞ր տեղիս էտա տաշտի մեչ պյուսան, խո երկընուց չթալիցին տակ:

Չարչին ի, կասի. - Ըռես, իշխաններ, աղաներ, տատականներ, ես խո մեղավոր չեմ, ես գյեղեն կուգյի, էշ շատ էր նեղացե, պեռն առիցի տակ, ասիցի, հայվան խեղճ ի, թող քիչմ արածա, ես էլ քաշվա խերկի մեչ, ամոթ ի ասել, ասի՝ քիչմ ճյուր թափեմ, տիսա որ էն տեղ իրեքյ կոլ ծըմրյուկ կեր, ըսկուն ին պըռնի որ, ըսկուն էլ ճոչ ին էտա անտերի ծըմըրկըներ որ զըմեն մեկ-մեկ կիտր կուգյա: Ըռես ախպեր, քո դավին ի՞նչ ի, տյու ջըվըլներ տուր զիկ, ես էրթամ էն ծըմրկըներ պիրեմ: Հաղ շարթ էլնի էսա ջաղամաթին բիթունին կուշտ ծըմրյուկ կիրիցուցեմ:

Ըռեսն ի, որ էսա խաբար կլսի, կասի. - Ջաղամաթ, տյուք բիթունտ էլ ծեր պարի ակընջով լըսա՞ք չարչու խաբըրներ:

Բիթիւն մեկպերան կասեն՝ խա:

Ըռեսն ի, կասի. - Ես մըկա խեփ էսա չարչուն բախսըմ պիփի պըռնեմ: Աման փյուք բիթիւնփ էլ ասփծու շիափ պիփի էլնեք, ես իմ ջըվըլներ կուփամ չարչուն, թող էրթա. թե որ սև փաշփից ծըմրյուկ պիրեց՝ զաթի թող գյա մըփնի իմ փուն, ուր ծեռ ինչ պանի վերեն որ փըռնի թող փանի՝ ուր խալալ էլնի: Թե որ ծըմրյուկ չի պիրեց՝ ես մըփնեմ ինոր փուն՝ իմ ծեռ ինչ պանի վերեն որ փըռնեմ՝ փանեմ զիկ: Տիսեք՝ վերև ասփված, ցածրն էլ փյուք շիափ էլնեք:

Չարչին ի, կասի. - Խա՜, ախպեր, իմ կարիւլն ի:

Ըռեսն ի, կասի. - Ջաղամա՛թ, փյուք լըսա՞ք որ չարչին ասաց՝ խա, իմ կաբյուլն ի:

Ջաղամաթն ի, բիթիւն մեկփեղ կբոռան. - Խա՛, մենքյ լըսանքյ, մենքյ շիափ ենքյ:

Ըռեսն ի, կասի. - Ջաղամա՛թ, թե չէ՝ ծըմրյուկ, չարչին որ ծըմըրյուկի կոլերն էլ, թաֆիրն էլ պիրի զիկ շանց փա՝ գյընու իմ կաբյուլն ի:

Չարչին ի, կառնի ջըվըլներ, ուրախ-ուրախ կինի ճամբախ, կէրթա. մեկ դեխեն էլ մեչ ուր մըփաց կասի. «Ես մըփնիմ ըռեսի փուն, իմ ծեռ վեր ի՞նչ պանի փընեմ»: Շափ կմփածի, քիչ կմփածի, կասի. «Վալա, ես իմ ծեռ պիփի փընեմ վեր ինոր թաջըրին, ըսկի չէլնի՝ մըկա հ'իսուն չափ կունդիկ սիրսուփ ցորեն կա ինե: Հը՛մ, փիւ խեփ զիկ բախս կպըռնիս խա՞, ըռես, զիկ չարչի Վարփան կասին, վալա քյո աչկեր պիփի թողնեմ պաց»:

Չարչին ի, ինքյն ուր ըսըսկընա խաբար փալով կէրթա կխասնի սև փաշփ: Ըզդեխ կինի, էնդեխ կինի, աչկեր մեկն չորս կանի՝ ծըմրյուկ չըկա: «Տո հավար մափաթ, էսա ծըմըրկըներ ի՞նչխ էլան, ի՞նչխ չէլան», ֆայդա չանե, ծըմրյուկ չըկա: Թող ծըմրյուկ, ծըմըրկի կոլ, թաֆըմ բիլա չըկա, ծըմըրկի պյուսած փեղ բիլա բալյու չանե:

Չարչին ի, էլ հ'ախու չի ւրառնա գյեղ, համան մեկ նաֆաս կվազի չուր քյաղաքյ: Կասի. «Էրթամ Գյազպար ախպեր կընփընեմ, բալքի փա՝ էն զիկ խելքմ սովըրցուցի՝ էսա սազըլովթնից ազափվիմ»:

Կէրթա կխասնի քյաղաքյ, իսոր-ինոր կխառցուցի, կասի. - Գյազպար ախպոր փուն ո՞րն ի:

Մարթեր Գյազպար ախպոր փուն շանց կուփան: Չարչին ի, կմփնի ներս, կէլնի վեր կփիսնա որ Գյազպար ախպեր նսփե էօդի վերին գյըլոխ: Պարև, ասփըծու պարին կանի, մըռութ-մալիւլ կնսփի:

Գյազպար ախպերն ի, կասի. - Խեր էլնի, չարչի ախպեր, ի՞նչ բաս ի, ո՞ր քյամին քյե թալեց ըզդեխ:

Չարչին ի, մեյ խափ ախ կըքաշի, կասի. - Գյազպար ախպեր, էլ մի խառցուցի, ըսկուն բալեմ իկե գյըլխուս, որ չեմ կանա ասե: Էկիր եմ մոփ քյե. ես զիկ թալիր եմ քյո բախփ, փյու զիկ խելքյըմ սովըրցուցիս, զիկ էսա ռազըլութնեց ազափես, որ փիւ զիկ բռթուցիր էսա բալից, հաղ շարթ էլնի՝ ասփըծու առաճ, ես քյո փան ըսփարվան ավել ինաւն էրկու գյունդ փոխինփ պիրեմ քյե:

Գյազպար ախպերն ի, կասի. - Ասա խենքյ, ինչ բալա յի, որ ըտըսկընեմ խառվիր ես իրար:

Չարչին ի, ամոթու գյըլոխ կկախի ուր առճև, կասի. - Էնօր որ տհւ զիկ ռաստ էկար, զզնիյ իրեքյ ճանգյ չամիչ առեյիր, զիկ իրեքյ խապ խսբար ասիյիր, ես թողիկի կընայի գյեղրանքյ, չամչըներ բիթհւն էլ ծախիյի, ասպըծուն փառք, էփեջա էլ վասպակ արիյի, պառնալու գյախ մեր սև պաշտի մեչ իշու պեռ թալիյի պակ, ասիյի. «Հայվան թող քիչմ արածա, ես էլ, ամոթ ի ասել, առաճայա մեչ խերկին, ասիյի ճյուրըմ թափիմ»: Ցիսա որ իրեքյ կոլ ծըմրյուկ էր պյուսե էդա տեղ, ըսկուն ծըմրյուկ էր պըռնե, ըսկուն ծըմրյուկ էր պըռնե, որ զըմեն ծըմրյուկ կուգյեր մեկ կիտր: Ես էլ ուրախյա, ասիյի. «Վալա, էսօր իմ կամաթ ուր ոտնով իկե իմ տուռ»: Համան շոտըմ էլմ'էլ էշ պառյի կընայի տուն: Իմ ջըվըլներ պըռնուկ էր, իպոր խամար իմ կընգյան ասիյի. «Կընա ըռեսի տընից ջուխտըմ ջըվալ պե, սև պաշտի մեչ ծըմրյուկ իմ տիսե, էրթամ պերեմ»: Իմ կընիկն էլ կընայ ըռեսի տուն, ջըվըլներ ուզեյ, մեկել պիսա որ ինչ. մեր ըռես գյեռ ինչ կանդար գյեղի մեչ ադա, իշխան, պապակսն որ կա՝ բիթհւն ժողվեյ, էկավ վեր մեր տըռան, ասայ. «Ցապսկահտեր, ես խետ էսա չարչուն բախս պիտի պռնեմ, էսա չարչին ուր կընիկ օրոխկեր ի մեր տուն, զզնիյ ջուխտըմ ջըվալ ուզեր ի, որ սև պաշտի մեչ ծըմրյուկ ի տիսե, էրթա պիրի. թե որ չարչին կընայ սև պաշտիյ ծըմրյուկ պիրեյ՝ զաթի թող մըտնի իմ տուն, ուր ծեռ ինչ պանի վերեն որ տընի՝ ուր խալալ էլնի՝ թող տանի ուր խամար. թե որ չի պիրեյ՝ ես կմըտնեմ ինոր տուն՝ իմ ծեռ ինչ պանի վերեն որ տըրի կառնեմ, կտանեմ զիկ»:

Ցառյավ ասայ. «Թե չէ ծըմրյուկ, որ ծըմրկի կոլեր, յան չէ թաֆիր պիրեյ զիկ շանյ իտուր, գյընա իմ կաբյուլն ի, թող մըտնի իմ տուն, ինչ որ ուր ջան կուզի՝ թող ծեռ տընի վերեն, տանի ուր խամար»: Ես որ էսա պռսն լսա, շատ ուրախյա, ասիյի. «Վալա, ես ըռեսի աչկեր պիտի թողնեմ պայյ»: Համան ջըվըլներ տըրեյի վեր իշուն, էլա ճամբախ, էկա սև պաշտ, տիսա որ ի՞նչ. նա ծըմրյուկ կա, նա էլ ծըմըրկի կոլ, յան թաֆ: Ըսկուն որ ծըմըրկի պյուսած տեղ բիլա չի կառյա կընտըռնի: Ես էլ հ'ախու էլ գյեղ չի տառյա, ասի. «Մեյ խապ էրթամ մոտ Գյազպար ախպեր, էն խելքյով մարթ ի, բալքի զիկ ճարմ անի, ես էն անաստվածի ծեռնիյ ազատվեմ: Ես կիտեմ էն պիտի մտնի իմ տուն, ծեռ տընի վեր իմ պեռան, տանի. իմ ումուդ ապավեն էլ գյեռ էն պեռն ի, էն պեռն էլ որ էն տարավ, իմ տուն կավիրի, ես կմընամ վեր պաղ թորվան:

Էսա չարչուն էլ մեյ խապ ըսկուն խորոտ կընիկմ կէլնի, որ չուտիս, չխմիս, էաս կընգյան խորոտկութեն թամաշա անես: Էսա ըռեսի աչկ մանգյար ընգյեր ի չարչու կընգյան: Չարչին էսա պանիյ խաբար չի:

Գյազպար ախպերն ի, որ չարչու խաբըրներ կլըսի, կխասկընա, մեյ խապ կծըծղա, կպառնա չարչուն կասի. - Ասւրված քյո տուն ավիր

չանի, ըռես քյո պեռան աչկ չունի, ինոր աչկ դեխ քյո կընգյան ի. թե՞ քյեզնիյ ես մեկ ճանգյ չամիչ առիյի ասիյի՝ քյո սըռ քյո կընգյան մ'ասե, փյու ի՞նչ շոփ իմ խա̈բար մոռյար:

Չարչին ի, կասի. - Գյազպար ախպեր, ես քյե մեղա, վալա, իմ մըփեն կընա̈յեր էր, փո̈ւ քյո ասփված որ կսիրես՝ զիկ ճարմ' անիս:

Գյազպար ախպերն ի, մեյ խափ կծծղա, կասի. - Չարչի ախպեր, փյու մի վախենա, կընա քյո փուն, քյո կընիկ խան փանիս, թարանջեն դիր, թող քյո կընիկ կայնի փանիս, առչըկան մանի: Տյու էլ կընա ըռեսին ասա, թե ախպեր, փյու զիկ փարար, արի էրթանք մեր փուն, քյո ծեռ վեր ինչ պանի որ կփնես՝ փար քյե: էն էլ կէլնի, գյեղականներ կժողվի, կուգյա կմփնի ծեր փուն, ըզդեխ, էնդեխ կֆըռա, կէլնի փյուս, քյո կընիկ կփիսնա վեր փանսին, ծեռ կուփա թարանջեն շուշոփ-շուշոփ կէլնի վեր որ ծեռ փընի վեր քյո կընգյան, փու համան շոփըմ խասի, ինոր փեշ պըռնի, ասա. է՜յ ըռես ախպեր, դո̈՞ր կէլնիս, մեր պայման էն ի, որ ծեռ ինչ պանի վերեն որ փընենքյ՝ էն փանենքյ. փու ծեռ փըրեյիր վեր թա̈րա̈նջին, առ քյո թարանջեն կընա: Տյու որ էսա ասիս, ըռեսն էլ, պա̈փականներն էլ ծեն չեն կանա խանի: Թարանջեն կուփաս ըռեսի քյամակ, կճամխես:

Չա̈րչին ի, որ էսա լսան կլսի, շափ կուրախնա: Գյազպար ախպոր կայ պարև կանի, կուգյա- գյեղ: Խեփ որ կմըփնի գյեղ, ըռես էն դեխեն կբոռա. - Է՜յ, չարչի Վարփան, դո̈՞ր մնայիր, ծըմըրկըներ պիրիյի՞ր:

Չարչին ի, կասի. - Ը՛ռես ախպեր, վալա փու զիկ փարար, էլի էրթանք մեր փուն, քյո ջան ինչ որ կուզի՝ ծեռ փիր վերեն, փար քյե, իմ կաբյուլն ի:

Ըռեսն ի, կէլնի գյեղականներ կժողվի, կասի. - Իկեք էրթանք, մենք բա̈խս պռնիյինք խեփ չա̈րչուն, չա̈րչին փարվավ: Սկա ես պիփի էրթամ ինոր փուն, ինչ պանի վերեն որ ծեռ փընիմ, պիփի առնիմ փանիմ զիկ:

Չա̈րչին ի, գյեռ ուր կընիկ խանե փանիս, կընիկն էլ կայնե առըչըկան կմանի, թարանջեն էլ գյեռ խեփ պափի իրեսին կայնուկ ի:

Ըռեսն ի, խեփ գյեղականերայ կմփնի չա̈րչու փուն, ըզդեխ կֆռա, էն դեխ կֆռա՝ կընիկ չկա: Կէլնի փյուս, կիրիշկա որ ի՞նչ. չա̈րչու կընիկ գյեռ կայնե փանիս առչըկան կմանի, արևն էլ զարկե վեր թըշերայ, կարմիր խընձեռրի պես կշողմըղա: Համան շոփըմ ծեռ կուփա թա̈րանջեն, շուշոփ-շուշոփ կէլնի վեր:

Չա̈րչին ի, համան կխասնի, իփիվանց ըռեսի փեշ կպըռնի, կասի. - Ջաղամա՛թ, մեր պայման էն չի՞, որ ծեռ ի՛նչ պա̈նի վերեն որ փընենք էն փանենք մե:

Ջաղամաթն ի, կասի. - Խա՛:

Չա̈րչին ի, կասի. - Ըռես, փու քյո ծեռ փըրեյիր վեր թարանջին, էլ դո̈՞ր կէլնես: Քյո մալ թա̈րա̈նջեն ի, առ քյո թարանջեն, կընա:

Ջաղամաթն ի, կբոռա. - Վալա, չա̈րչին հաղ ունի. ըռես, փու ծեռ փըրեյիր վեր թա̈րա̈նջին, առ քյո թարանջեն, կընա:

Ըռեսն ի, կտիսնա որ էլ ճար չըկա, սրտակուտոր յավաշըմ կէճնի տակ, թարանջեն կտըռնի վեր ուր թիվեն, կառնի կէրթա: Կխասնի մոտ ուր տուռ թե չէ՝ սռտի աֆքյարից թարանջեն կտըռնի գյետին, կանի կտոր-կտոր, կտառնա կլըցի պուխուրիկ, կվառի:

Չարչին ի, որ կտիսնա թե էսա բալից ազատվավ, կէլնի մեկ խուռց սիվտակ ավել, էրկու գյունդ էլ կարաքյ եղով շաղըղուկ տոխինտ կառնի, կէրթա Գյազպար աղին տեսութեն: Կէրթա Գյազպար աղի տուն. էն օր էլ Գյազպար աղեն տավաթ էր արե: Մ'ասե որ էսա Գյազպար աղեն էլ էտա քյաղքյի տատավորն էր: Էսօր էսա տատավոր տավաթ էր արե, ինչ կանդար ճի̈չ-ճի̈չ մարթ կեր, բիթի̈ւնին կանչեր էր ուր տուն: Չարչին էլ խետ կմըտնի ներս, պարս աստըծու պարին կանի, համան կէրթա վերեն գյըլի̈խ կնստի: Իրիկուն ի, էսա մարթեր որ յավաշ-յավաշ կժողվռտվեն, ըսկուն որ վով որ մըտնի, ներս վեր կիրամցուցեն: Չարչի Վարտան յավաշ-յավաշ հա կյաքշվի տակ, թազա գյացողներաց տեղ կուտա, ըսկուն որ կէրթա կինի տըռան իտև:

Գյազպար ախպերն ի, էսա որ կտիսնա, ամոթու ուր պըռկըներ կկըծի, աման ի՞նչ անի, ծեռ ճար չըկա: Վարհասլի, էտա իրիկուն ի, խաց-կերակուլ կուտին, կպըռծընին, ըստըրիս ծըմրյուկ կպիրեն օրթալաղ, որ ծմըրյուկ ուտեն, տանակ հազըր չէլնի: Գյազպար ախպերն ի, կբոռա ուր տընցոց. - Տանակ պիրե՛ք, տանակ:

Չարչին ի, որ տանակի անուն կլըսի, ծեռ կմըտուցի ուր ջեբ, մեյ խւստ ալմաստ կոթ ճի̈չ չախում կխանի, կթալի վեր սինուն, կասի. - Ա՛ռ ծըմրյուկ կըտըռտի:

Խետ որ ալմաստ կոթ տանակ կթալի վեր սինուն, էն դեխեն մըսաֆըրներաց մեկն համան կթփվի վեր էտա տանակին կառնի, ծեռ կզարկի չարչու յախեն կպռնի, կասի. - Վալա, ես իմ գյող կընտա, ջաղամաթ, տուք բիթի̈լըտ էլ կիտեք, որ էսրից յոթ տարի առաճ գյողեր մըտան իմ խանութ թալնեցին, քսան խազար վուսկու ապրանք տարան: Էսա ալմաստ կոթ տանակն էլ մերն էր, էն կիշեր մընայեր էր մեր խանութ, խետ ապրանքյներաց տարեր են: Ես էսա յոթ տարի էր, որ ընգյեր ի էդա գյողերաց իտև, կֆռի՝ չի կանե կընտընե, մկա գյեռ կընտա: Էսա չախուն տարող՝ էն մալիրն էլ ի տարե: Ես իմ քսան խազար վուսկու ապրանքյ քյեզնից կուզիմ, այ մարթ:

Կտառնա չարչու յախեն կքյաշի, կասի. - Ես իսոր պիտի տանիմ տուլիս կահիրեսեն պռնել տամ, չուր տողրին ասի՝ խենքյ ուր ընգյըրներ վո՞վ ին:

Գյազպար ախպերն ի, էսա պան որ կլսի, մեյ խատ կխոռմըռա վեր չարչուն, աման ֆայդեն ի՞նչ. համան շոտըմ կխասնի, էտա թյուջրի ծեռ կպըռնի, կասի. - Թյուջար ախպեր, տու էլ կիտես, էսա ջաղամաթն էլ կիտի, ապրվածն էլ կիտի, որ էսա տատ հան սոն պիտի գյա մոտ զիկ, իսոր տատ ես պիտի կըտրիմ: Էսա մարթ որ կա՝ իմ մըսաֆըրն ի էսա կիշեր, տու արե մ'անե, մ'էլնե, իմ նամուսին մի դեպնե, էսա մարթ թող

մնա մեր տուն, ես վաղն առատուն պոնիմ. իմ ծեռնով պիրեմ թասլիմ անեմ քյե: Աման կավլ կանեմ աստըծու առճև, որ ես կիշերս խեստ ինոր լեզու չի թռճեմ, չի թողնեմ որ ուրիշ մարթու իրես էլ տիսնա, ուրիշ մարթու խեստ խարար տա: Մենակ թե քյանի որ կիշերս իմ մըսաֆըրն ի, մկա տու իմ տնիչ կիշրով խանիս տյուս, իմ կանդար ծախք մասրիֆ զարկես քյարին, իմ նամուսին զյուլ ի, աղեկ չի:

Ջաղամաթն ի, որ Գյազպար ախպոր խաբըրներ կլսի, կասի. - Գյազպար ախպեր հաղ ունի, քյանի որ էսա մարթ ինոր մըսաֆըրն ի, էսա կիշեր թող մընա, առատուն ինքյ ուր ծեռնով պիրի քյե թասլիմ անի, մենքյ Գյազպար ախպոր խոսկին բավար կանենք:

Թյուջարն ի, կասի. - Ես էլ Գյազպար ախպոր խոսկին կավատամ, թող մնա, աման առատուն շոտ էլմ'էլ ես կուզյամ կտանեմ:

Տավաթի մարթերն ին, կուտին կխմին, կէլնեն կյվոտվին: Խեստ որ չարչին ինան Գյազպար ախպեր կմնան մենակ, Գյազպար ախպերն ի, կատուն կառնի, կնստի վեր սանդրին, կբաշլայի կատվուն մեյ դիխեն մաժել, մեյ դիխեն ասել. - Թալանի կատու, տու էշ կէլնիս, մարթ չես էլնի: Ես քյե մեկ բալիս ջեորով բըռթուցի, մկա տու էլմ'էլ ջուխտ ոտնով էկար մեչ ըսկուն բալի ընգյար, որ պիտի ոտով զյըլխով կուրիսիս:

Չարչին ի, որ էսա խաբըրներ կլսի, կխասկընա որ Գյազպար ախպեր խեստ ուրն ի, ակընջներ կանի մեկ չորս, կասի՝ խենքյ ի՞նչ կասի:

Գյազպար ախպերն ի, կխասկընա որ չարչին գյըլխու ընգյավ, կատվուն կմաժի, կասի. - Թալանի կատու՛, ես որ քյեզնիս իրեք ճանգյ չամիչ առիսի կերա, տու գիտցար որ իմ ասած խաբըրներ պոշ պան ին, էն իրեք խաբըրներ մեկ-մեկ նասիհաթ են, որ մեզնիս խելացի մարթեր շիներ են քյե պես ախմախ մարթերաց խամար: Ես քյե ասեցի, թե քյո սոտի սըռ քյո կընգյան մ'ասե, տու զիկ չի լսար, գյախն էր՝ տփին վեր կոտիտ, կընիյտ ծեռնետ առնին: Ես քյե խելքյ սովրցուցի, տու քյո կնիկ ազատեցիր, մեղայի էկար ասիր՝ ըստըրիս ես քյո նասիհաթներ իմ միտ կպախեմ: Հալբու քի մեր տուն ոտ կոխեցիր թե չէ՝ նաբխեր, նաբսալամաթ ոտ կոխիր, մեչ մեկ սհաթվան էրկու նասիհաթի թարսնեն արիցիր: Թե՞ ես քյե ասիցի, թե որ տեղմ կէրթաս, քյո գյըլխու վերեն գյըլոխ մի նըստե որ ցածր չէճնես: Թալանի կատու, տու մտար ներս, թե չէ՝ տողրի էկար նստար վերեն գյըլոխ, ըսկուն որ վով որ մտավ ներս մենքյ չարնաչար վեր նստըցուցինք, տու ոռեզատիկ-ոռեզատիկ կընացիր ընգյար տռան իտն: Տու խավնա՞ր քո արաժին, որ ես էլ խավնիմ, թալանի կատու:

Չարչին ի, մեյ խատ ախ կքյաշի, գյըլոխ կտանի կպերի, մեչ ուր մտաց կասի. «Վալա, Գյազպար ախպեր աղորթ կասի, ես էշ կէլնեմ, մարթ չեմ էլնի, ես ի՞նչխ ըսկի ֆանկուն չէլա»:

Գյազպար ախպերն ի, գյընա կատուն կմաժի, կասի. - Թալանի կատու, էտա էլ ասենքյ ջահնամ որ կընացիր տռան իտե, աղեկ էլավ,

զաթի էնտեղն էր քյո տեղ: Աման տու ինչ կանդար ախմախ մարթ ես, որ ուրիշի տան մեչ, տան տիրոչ պանին կխառվես: Ծըմրյուկ ուտելու գյախ չախու չըկեր, քյե ի՞նչ, ինոնքյ չախու տան տիրոչ մոտեն ուզիցին, քյեզնից վո՞վ չախու ուզից, որ տիու համան շոտըմ ծոու կայդա ծեռտ տարար ջեռբտ, չախուն խանիցիր թալիցիր վեր սեղնին: Սանգյար էսա տուն բյամբա՞խ էր, չախու չկե՞ր, մկա ի՞նչխ ես թողնեմ քյե տանեն կախեն, հաղն ի, թե չէ՞, թալանի կատու:

Զարչին ի, որ կախվելու անուն կլսի, տողըմ կուտա ուր ջան, հախու կկծկվի, կմնա ուր տեղ, կասի.«Վա՜յ, վա՜յ, կընայինքյ էլանքյ էշ-նահատակ սեր սատամաթ մեր իշուեն»:

Գյազպար ախպերն ի, մեյ խատ կզարնի կատվու գյըլխուն, կասի. - Թալանի կատու, վալա, քյո կախվել տեղն ի, աման գյընա իմ դիժար կուգյա վեր քյե, քյո տըված իրեք ճանգյ չամիչ չեմ մոռնա, խորոտ ականջ արա դե, ի՞նչ կասիմ: Էսա բալիցն էլ քյե կփոթուցեմ, աման որ մեկել ըսկուն իշուեն արիր՝ էլ չեմ խառվի, խոգյիտ էլնի, կընա վառվի:

Զարչին ի, որ կլսի թե Գյազպար ախպեր կասի՝ էսա բալից էլ քյե կփոթուցիմ, խոգյին կուգյա փոր, մեյ խատ խավասով նաֆաս կառնի, ակընջներ կսրի, ականջ կանի:

Գյազպար ախպերն ի, կասի. - Թալանի կատու, առատուն փուլիսներ բյե կպռնին, կտանին ըզդեխ, տու ծեն չիս խանե, չիւր բիթիւն տեղ էտա թյուջսարն ասի թե՝ էսա չախուն իմն ի: Որ բիթիւն տեղ կասի կպըռծընի, տատականներ ըստըրիս քյե հյուքըմ պիտի տան, տու չի վախենաս: Համան հյուքմաթի առձև ծեռ կզարկես, էն թյուջրի յախեն կպըռնիս, կասիս. «Տատական աղեքյ, իմ խեր որ կեր՝ ճիչ թյուջար էր, էսրիս քըսանխինգյ տարի ամոճ ուջմու թարաֆեն խետ ուր ըղտան քարվընին կուզյե՞ր, բիրդան գյոդեր կուտան վեր քարվընին քարվան կչըլտին, քարվընի բիթիւն մարթերաց կըսպանին, իմ խորն էլ կսպանին, էսա ալմասատ տանակն էլ զարկեր ին մեչ իմ խոր սոտին, էլ չեմ կիտե՝ մա՞րթ էր իկե էն դիխեն, թե չէ, մոռցիր ին, էսա տասնակ մնացիր էր մեչ իմ խոր սոտին: Խաբար պիրեցին զիկ, ես էլ խեծա իմ ծին, մշայներ առիցի, խասա տիսա որ ի՞նչ. քարվան զաթի չկա, մարթերն էլ բիթիւն սպաներ ին: Կընայցի վեր իմ խոր ջանդըկին, իրիշկացի որ էսա ալմասատ տանակ գյեռ մեչ իմ խոր սոտին շուլուլուկ ի: Ես էլ էսա չախուն էսա քըսանխինգյ տարի ի տրիր եմ իմ ջեռբ, էլիր եմ չարչի, աշխար կֆռամ, որտեղ որ էրկու խատ մարթ էլնի՝ մըհանեմ կպռնեմ, էսա չախուն կխանիմ, կթալիմ օրթեն, կասեմ՝ բալքի իսոր տերմ էլնի: Էրեկ իրիկուն տավաթի մեչ էսա մարթ էսա չախուցին տեր էլավ, մկա էլ ըստեղ ուր պերնով խոստովանվավ թե՝ չախուն իմն ի, տիւք բիթունտ էլ ծեր պարի ակընջով լսաք, մկա ես իմ խոր սպանող կընտաս, թողզ են մալեր-ապրանքներ, ես իմ խոր արընգյին էլ քյեզնից տավի կանիմ»: Լսա՞ր, թալանի կատու, չվախենաս: Ինչխ որ ես քյե ասեցի, տու էլ վաղ ըսկուն կասիս, թե չէ քյե կտանին գյըլոխվեր կկախեն՝ խեղճ իս:

Թալանի կատու, տու որ էսա կասես՝ տատականներ ըստըրիս քյո թարաֆեն կպըռնին, կթալին կպըռնին, քյո խոր արընգըյին կկըտրին տաս խազար քյիսա ոսկի: Էն գյախ ես կինեմ օրթեն, միանջի կասիմ՝ խինգյ խազարն պաշխի: Տու զիկ չի կոտրիս, խինգյ խազարն կպաշխիս ինոր, խինգյ խազարն կառնիս: Լսա՞ր, թալանի կատու, խորոտ խելքյտ վերետ ժողվի, ես քյե ինչխ ասիցի՝ առատուն տու էլ ըսկուն ասա:

Գյազպար ախպերն ի, էսա որ կասի կպոծնի, մեյ խատ կայիմ կզարկի վեր կատվու գյըլխուն, կթողնի պաց, կասի. - Տե կընա քյընի, թալանի կատու, կես կիշերն ընցավ, խանգյիստ քյընի, մառախ մ'անե, մենակ թե իմ ասածներ խորոտ սեռտի որ չի մոռնաս:

Գյազպար ախպերն ի, էսա որ կասի, կէլնի վեր, իսկի չիրիշկա բիլա դեխ չարչին, կթողնի կերթա կքյընի:

Առատուն շոտ թյուջարն ի, կառնի փուլիաներ, կուգյա չարչուն կպըռնի կտանի: Կտանին հյուքմաթ ըզդիխ, ենդիխ: Բիթուն տեղն էլ էսա թյուջար կասի թե՝ էսա չախուն իմն ի, էսա իմ գյոդն ի, ես իմ խանութի ապրանքներ էսա մարթուց կուզիմ, որ չախուն իսրա մոտն ի, հըմեն պան էլ էսա մարթու մոտն ի:

Տազուսկաններն ին, կպիրեն որ էսա չարչուն հյուքյմ տան:

Չարչին բիրդան ծեռ կզարկի էսա մարթու յախեն կպոնի կասի. - Է՜յ, հյուքմաթի մարթեր, ադյուք բիթունտ էլ ծեր պարի ակընջով լսաք, որ էսա մարթ կասի՝ էսա չախուն իմն ի:

Հյուքմաթի մարթեր բիրդան կշշկոնին, կասին. - Խա, ի՞նչ կուզիս ասել:

Չարչին ի, քյամապընչելեն աչկեր կլարի, կասի. - Փառքյ քյե աստված, տու շարունգն մուկ հըմեն գյախ էլ ըսըսկընա ջուխտ ոտնով իսկես ակնուսվ: Էսա մարթ որ կա, իմ խոր սպանողն ի:

Հյուքմաթի մարթերն ին, որ էսա պան կլսին, բիթունի պերուսներն էլ կմնա պաս, կիրիշկան մեկմեկու իրես, կշըվարին, կմընան:

Չարչին ի, էսա պանիցի տահա շատ սիոտ կառնի, կբաշլայի. - Իմ խեր որ կեր՝ աջմու երկրեն էր, ճիչ թյուջատմ էր: Էսրիցի քըսանխինգյ տարի առաճ իմ խեր խետ խարիր քյառսուն ըղտի պեռ ապրանք առեց, էկավ էսա թարաֆ թյուջրութեն: Ճանբախ գյոդեր կթալին վեր քարվնին, բիթունին կսպանին, ապրանքներն էլ ըղտերով մեկ տեղ կառնին կէրթան: Ես քարվընիցի ետ ի մընուսցի, պյուրդ կժողվի, խաբար պիրեցին զիկ, թե՝ քյո խերն գյոդեր սպաներ ին: Ես էլ խեծա իմ ծին, մեր մեկ-էրկու մշակներն էլ առիցի խետ ծիկ, համան խասա էնտեղ որ քարվան չընտեր ին: Տիսա որ ի՞նչ. նա ոտտ, նա ապրանք, իմ խորն էլ սպաներ ին, էսա ալմաստ կոթ տանակն շուլուլեր ին մեչ սուրին· Ես էլ էսա տանակ առեցի, տրեցի իմ ջեռբ, էլա մեյ խատ չարչի, ընգյա աշխընրե աշխար ֆռալ: Որտեղ որ էրկու խատ մարթ տիսնի մեկտեղ, մընանեն պամ կանի, էսա չախուն կխանի կթալի օրթալաղ, կասիմ բալքյի մեկն տեր էլնի իսոր, ես իմ խոր սպանող ճանչընամ: Էրեկ իրիկուն ես

Գյազպար ախպոր տուն ի, էսա մարթն էլ խետ պйլուգյմ մարթերայ դա տավաթ էր, ծըմրյուկ ուտելու գյախ ես մախմйս էսա տանակ գյընա թալեցի օրթալաղ, ափցի խենքյ տերմ չէլնի՞: Բիրդան էսա մարթ էլավ տեր ինչխ որ ըստեղն էլ ասայ. ասայ՝ իմ տանակն ի, մկա ես իմ խոր սպանող կընտա̈, թողզ էն խարիր քյառսուն ուղտ ուր պեռներով, ես իմ խոր արընգյին էլ էսօրից դավի կանիմ, իմ ումուտ վիրև ապտված, ցածր տйքյ՝ հյուքմաթի մարթերն եքյ, տուքյ իմ տատ էսա մարթու տատ պիտի կտրեքյ:

Հյուքմաթի մարթերն ին, որ էսա պա̈ն կլըսեն, տահա շատ կզարմանան: Համան շոտըմ էտա թյուջարին ամր կանին ծեռքյեր ոտքյեր կապել, կթալին կպռնին էսա մարթու զիան ինաւն խոր արընգյին կկտրին տըսս խազար քյիսա ոսկի:

Ըստեղ Գյազպար ախպեր կինի միանջի, չարչուն կասի. - Պան չըկա, էլածն էլած ի, տու արի էն խինգյ խազար քյիսեն պաշխի զիկ, էն խինգյ խազար քիսեն առ, խերիքյ ի, էսա մարթն էլ խեղճ ի, էն վախտ ջահելութեն արեր ի, աման էսօր տոշման ի վեր ուր արածին:

Չարչին ի, կասի. - Գյազպա̈ր ախպեր, էն խինգյ խազար քյիսեն էլ թող կուրպան էլնի քյե, թե որ տու ասիր՝ բիթիւն էլ պաշխի, ես քյո խոսք չի կոտրե: Իմ աֆքյարն էն էր, որ ես խասկընի թե իմ խոր սպանող վո՞վ ի: Մկա ես խասկըցա, իմ խեր իմ ծեռնից էրթալուց սորա էն փատեն իմ աչկ չի գյա:

Թյուջարն ի, որ տըսս խազար քյիսա ոսկու անուն լսելուն պես թյուք մեչ պերնին չորցիր էր, խետ որ կտիսնա թե խինգյ խազար քյիսով ռազի էլավ էսա մարթ, համան շոտըմ ըզդեխ ընգյավ, էն դեխ ընգյավ, խինգյ խա̈զա̈ր քյիսա ոսկի թըմըմեց պիրեց իտուր էսա չա̈րչուն:

Չա̈րչին ի, էսա խինգյ խա̈զա̈ր քյիսա ոսկին առնելուն պես՝ էլ չանի նամարդութեն, իրիկուն տողրի կէրթա Գյազպար ախպոր տուն, ոսկիքյ տոպըրկներով կտնի Գյազպա̈ր ախպոր առճև, կասի. - Ա՛ռ, Գյազպա̈ր ախպեր, էսա փա̈րեն որ կա՝ քյոն ի, տո̈ւ որ կաս, ասպըծուց խրիշտակմ իր՝ իճա̈ր զիկ ա̈զա̈տեցիր. թե չէ մկա զիկ խեր նիա̈ղ տեղ պիտի տանին սպանին: Ա՛ռ էսա փա̈րեն, քյե խա̈լա̈լ ի, տո̈ւ զիկ ա̈զա̈տեցիր՝ էն հալա զիկ շատ ի:

Գյազպա̈ր ախպերն ի, էրկու խա̈զա̈ր քյիսեն կվերուցի ուր խամար, իրեքյ խա̈զա̈ր քյիսեն կուտա չարչուն, կասի. - Դե կընա̈՛, խելքյըտ գյըլոխտ ժողվի մարթ էլի, էսա նասիհաթներ որ տու առիցիր՝ քյե խամար կարժեն զաթի քաան խա̈զա̈ր քյիսա ոսկի:

Չա̈րչին ի, Գյազպա̈ր ախպոր ծեռ կպաքյի, կառնի ուր իրեքյ խա̈զա̈ր քյիսա ոսկին, կէրթա̈ գյեղ, ուր տուն-տեղ կպա̈ռնա, յալա բաբամ, չո̈ւր Պարսկաստան մեկ կէրթա̈ կկուրիսի: